

վանտին և Դշխոյին և որդոցն Սիմէոնի, Վարդանին, Սարգսին, Մեսրոպին գտաւրն Հոիփսիմէին. և յին»։ (Հաղպ, Յուց. Թ. 42)։

ՄԿԻՏԻՉ ՎԻԳ. ԱՐԾՐՈՒՆԵԱՆ. ԿԱՄ ՏՐ. ՄԱՐՏԻՐՈՆԵԱՆ ԲԱՂԻՇԵՅԻ.—Մբ. ՏՅ. և ՏԻ. հետեւեալները շնոր ընդօրինակութիւններն են. Այլապակի տարազիսակակ 1835ին, որ ունի սա յիշատակարանը. «ի յաշխարհամատարան սուրբ տաճարն. առ ընթեր կենսատու սրբոյ Գերեզմանին Քրիստոսի.» (Թ. 109). 1838ին հաւաքուան ուսակց տարապաւակակ բակից եղերոց ի տրակաւաւակակակ կոյակայ, ընդօրինակուած Ս. Յարութեան տաճարին մէջ. (ՄԶ. Թ. 982). 1845ին ընդօրինակուած է Մխիթար Գօշ վրդ.ի Մեկնութիւն մարգարեալեան Երեմիայ գործը հետեւեալ յիշատակարանով. « ընդօրինակեցաւ ձեռամբ անիմաստ գրչի Մկրտիչ վրդ.ի տէր Մարտիրոսի Արծրունեան. ի սուրբ երուսաղէմ. 1845 հատոր առաջին, յառաջիկայ գլխոյ մինչև ցվերջ երեսուն և մի գլուխն.» : Մկրտիչ վրդ. այս յիշատակարանէն զատ, վերջին ձեռագրիւ մէջ ունի իր հետեւեալ Օրագրութիւնը, գոր Բարգէն Սրբազան բնագիրէն Վիհնայի մէջ ընդօրինակուած և մեղ յանձնած ըլլալով կը գնենք նոյնութեամբ. « 1849, Ապրիլ 29 ելաք ի Դամասկոսէ. ժամանեցաք ի Վերիտոն ի 3 մայիսի. ի 6 նոյն ամսոյ ելաք ի Լիբանան ի վանս վերափոխման սրբոյ կուսին. ի 8 վերագործաք անտի ի Վերիտոն. ի 9 Յունուար կիւրակի սրբազան կաթողիկոսն Հայոց ուղղափառաց եկեալ ի Հոռոմայ. եմուտ ի քարանթինան. ի 13 ելեալ ի Վերիտոնէ գիմեցաք յերուսաղէմ քաղաքն. ի 25 ժամանեցաք անդ. ի 29 մայիսի տուաք գհաշիւն երկուց ամաց առաջնորդութեան արդեանց վանացն Սրբոյն Սարգսի որ ի Դամասկոս. և տէրունական ուխտաւորաց : Ի Յունիս 12 բացաք զգուն սուրբ Յարութեան տաճարին. ի 27 իջաք ի նաւահանդիստն Յոպպէ գնալ ի Տիբերիա, 6 Յուլիսի ելաք ի Յոպպէ ու ի 13 աւուր ամսոյն հասաք ի Վերիտոն. ի 7 Յուլիսի ելաք ի կաթողիկոսարանս և ի վանս վերափոխման կուսին. իսկ ի յերրորդ աւուր Օգոստոսի. ի յիններորդ ժամու տուաք զգաւանութիւն ուղղափառ սուրբ հաւատոյն ի ներկայութեան աստուածընտիր սրբազնակատար կաթողիկոսին Տեառն Գրիգոր Գ. և Պետրոսի Ը. և համայն սըրբագումար միաբանութեան եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից հարց և եղբարց. և ի հնդեասաներորդում աւուր